# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/39Փ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ**

**մեկնարկ՝** 13.10.2025թ.
ժամը 16:00
**ավարտ՝** 21.10.2025թ.
ժամը 12:00

***Մասնակցում էին՝***

***Հանձնաժողովի նախագահ՝***

| | |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ) | Նորիկ Մնոյան |

***Հանձնաժողովի անդամներ՝***

| | |
|---|---|
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) | Աստղիկ Խաչատրյան |
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) | Հրանտ Մինասյան |
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) | Գևորգ Խեչումյան |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) | Լաուրա Գևորգյան |

***Հանձնաժողովի քարտուղար՝***

| | |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ) | Լուսինե Աբովյան |

## «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/39Փ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

### 1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝

հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

| Չափաբաժնի | | Չափաբաժնի անվանումը |
|---|---|---|
| համարը | գնման գինը | |
| 1 | 982 800 | **S-5-39, /Մ-6/ - Քարաբերդ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+300 հատվածի և այդ ճանապարհից դեպի զորամաս տանող ճանապարհահատվածի (շուրջ 2կմ) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ** |

## 2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ **2025 հոկտեմբերի 13-ին, ժամը՝ 16:00-ին**:

2.2 Սահմանված կարգով ներկայացվել է 1 հայտ, որն ընդունվել է Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի:

2.3 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

| № | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն | ՀՎՀՀ | Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար |
|---|---|---|---|---|
| 1 | «ԳԵՐԱ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Աբովյան պ./շ..17/բն.21 | 02925161 | vtersimonyan@gmail.com<br>Հեռ. +374 91 214 705<br>+374 55 566 119 |
| 2 | «Պրոմեթեյ» ՍՊԸ | ք. Երևան, Նար-Դոսի փող., 75 շ., բն. 9 | **02847013** | v19512014@yandex.ru<br>Հեռ.+374 98 40 55 98 |

## 3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

3.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը

**Չափաբաժին 1: S-5-39, /Մ-6/ - Քարաբերդ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+300 հատվածի և այդ ճանապարհից դեպի զորամաս տանող ճանապարհահատվածի (շուրջ 2կմ) հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | **«ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ** | **145 000** | **0** | **145 000** |
| 2 | «ԳԵՐԱ» ՍՊԸ | 299 000 | 0 | 299 000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

## 4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:

4.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

4.2 Մասնակցի էլեկտրոնային հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

**5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

5.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

**6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:**

***Գնահատող հանձնաժողովը որոշեց.***

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «ՊՐՈՄԵԹԵՅ» ՍՊԸ-ին:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Նորիկ Մնոյան** | ..... |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Աստղիկ Խաչատրյան** | ..... |
| | **Հրանտ Մինասյան** | ..... |
| | **Գևորգ Խեչումյան** | ..... |
| | **Լաուրա Գևորգյան** | ..... |
| **Քարտուղար՝** | **Լուսինե Աբովյան** | ..... |